ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Մայիսի 19-ին Երևանում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողով՝ ակադեմիկոսների, թղթակից-անդամների և ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների ղեկավարների մասնակցությամբ:

ՍՄԿԿ XXIV համագումարի արդյունքների և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

— Կուսակցության XXIV համագումարը,— ասաց նա,— պատմական խոշոր իրադարձություն էր մեր ժողովրդի կյանքում: Ի մի բերելով այն մեծ նվաճումները, որոնց հասել է մեր երկիրը վերջին հնգամյակում և առհասարակ վերջին ժամանակաշրջանում, նա միևնույն ժամանակ ուղիներ մշակեց մեր հետագա զարգացման համար:

Ընթացիկ հնգամյակի ընթացքում մեծ նշանակություն է տրվելու մեր երկրի բնակչության բարեկեցությունը բարձրացնելու գործին: Թերն ու սենդի արդյունաբերության զարգացման տեմպերը զգալիորեն ավելի բարձր են լինելու նախորդ հնգամյակի համեմատությամբ: Այս բոլորը պետք է կատարվի տեխնիկական առաջընթացի հիման վրա, իսկ դա նշանակում է, որ պետք է շարունակեն զարգանալ ժողովրդական տնտեսության հատկապես այն ճյուղերը, որոնք ապահովում են տեխնիկական առաջադիմությունը:

Համագումարում նշվեց այն հանգամանքը, որ մեր օրերում ամենամեծ դերը ժողովրդի կյանքում խաղում է տեխնիկական առաջադիմության, տեխնիկական հեղափոխության իրագործման խնդիրը: Երբ մեզ հաջողվի գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները միավորել սոցիալիստական հասարակարգի առավելությունների հետ, այն ժամանակ մենք կկարողանանք բարեհաջող կերպով լուծել մեր առաջ դրված խնդիրները: Դրանց իրականացման համար մեծ անելիքներ ունեն գիտության աշխատողները, հնտեսաբար և մեր ակադեմիայի աշխատողները: Առաջին հերթին պետք է, ամեն կերպ բարձրացնել մեր հիմնարկների աշխատանքի էֆեկտիվությունը: Գիտության աշխատողները ևս պետք է, հետևեն իրենց նորագույն նվաճումների ներդրմանը, նրանք պետք է իրենց աշխատանքի արդյունքները այնպիսի վիճակի հասցնեն, որպեսզի դրանք հնարավոր լինի ներդնել ժողովրդական տնտեսության մեջ:

Նոր հնգամյա պլանը խոշոր խնդիրներ է դնում մեր հանրապետության առաջ: Այդ խնդիրների լուծումը պահանջում է ուժերի ավելի մեծ լարում Հայաստանի ամբողջ աշխատավորության կողմից: Այդ խնդիրները անհնարին է լուծել առանց գիտության բնագավառի աշխատողների լուրջ ջանքերի: Մեր գիտնականները, տեխնիկական մտավորականությունը մեծ անելիքներ ունեն այդ խնդիրների լուծման գործում՝ հանրապետության համար մաքսիմալ օգուտ բերելու նպատակով:

Տեխնիկական առաջադիմությունը հենվում է հետևյալ հարցերի վրա՝ նոր տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպում, նոր նյութերի կամ նոր որակով արդեն հայտնի նյութերի ստեղծում, նոր սիստեմների ստեղծում, որոնք պետք է ծառայեն ժողովրդական տնտեսությանը: Այս երեք բնագավառներում մենք մեծ գործ ունենք կատարելու: Այստեղ հասարակագետները նույնպես մեծ անելիքներ ունեն, քանի որ ժամանակակից տեխնոլոգիան փոխում է և ողջ հասարակական կյանքը: Մենք գիտակցում ենք, որ մեր ակադեմիայի գիտնականները շատ մեծ պատասխանատվություն ունեն հանրապետության զարգացման համար, բայց ի՞նչ կոնկրետ ճանապարհներով մենք պետք է, մոտեցնենք մեր ինստիտուտների աշխատանքները արտադրությանը, որո՞նք են այդ ճանապարհները: Ես կարծում եմ, որ առաջին հերթին անհրաժեշտ է, բարձրացնել հետազոտությունների գիտական մակարդակը և գիտական աշխատանքի էֆեկտիվությունը բոլոր գիտահետազոտական ինստիտուտներում: Թույլ գիտությունը չի կարող օգնել արտադրությանը, կարող է, օգնել միայն ուժեղ գիտությունը, որը գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա: Մեր ակադեմիայում որպես աշխատանքի մակարդակի չափանիշ պետք է ընդունվի այն, թե գործնական նշանակություն ունեցող ինչպիսի՞ արդյունք է տալիս տվյալ գիտական հիմնարկը:

Մենք պետք է, ավելի պահանջկոտ լինենք

մեր ինստիտուտների նկատմամբ, ինստիտուտները՝ իրենց բաժինների և առանձին աշխատողների նկատմամբ: Պետք է ամեն կերպ խրախուսել ինստիտուտներում փորձնական արտադրությունների ստեղծումը: Մենք պետք է աշխատենք նոր հնգամյակի ընթացքում լուծել գիտությունը արտադրության հետ կապելու խնդիրը:

Գիտության մեջ բոլոր հարցերը լուծվում են կադրերի լավագույն ընտրության միջոցով: Մենք պետք է չվախենանք ավելի արագ առաջ քաշել երիտասարդ կադրերին, նրանց ստեղծագործական ակտիվությունը միացնելով ավագ սերնդի փորձին: Մեր ինստիտուտները պետք է հագեցնել ժամանակակից սարքավորումներով, դրանք խելացիորեն ծառայեցնել հիմնական խնդիրների լուծմանը:

Խոսելով հասարակական գիտությունների բաժանմունքի մեջ մտնող հիմնարկների առաջ կանգնած խնդիրների մասին, ընկ. Համբարձումյանը ասաց.— Դնալով պահանջները դեպի հասարակական գիտությունները մեծանում են, և մենք կարող ենք նշել, որ բաժանմունքի մի շարք ինստիտուտներ կարող են մեծ գործ կատարել մեր առջև կանգնած խնդիրների լուծման մեջ: Մեր հասարակությունը արագ փոխում է իր դեմքը՝ շնորհիվ սոցիալիստական շինարարության, շնորհիվ գիտատեխնիկական հեղափոխության: Կատարվում են չափազանց բարդ պրոցեսներ: Հասարակական գիտությունների ներկայացուցիչները մեծ աշխատանք ունեն կատարելու այդ նոր իրադրությունը գիտականորեն վերլուծելու տեսակետից:

Այնուհետև զեկուցողը ճանգամանորեն խոսեց համագումարի պատմական որոշումների լույսի ներքո հանրապետությունում գիտության տարբեր ճյուղերի զարգացման ուղիների մասին:

Ժողովում ելույթ ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ալիխանյանը, Ռ. Ադայանը, Վ. Գուլբանյանը, Մ. Մանվելյանը, Ա. Շահինյանը: Նրանք խոսեցին այն մասին, որ անհրաժեշտ է գիտական հետազոտությունները էլ ավելի մերձեցնել պրակտիկային, բարձրացնել գիտական աշխատանքի արդյունավետությունը, գիտական նվաճումները արագորեն ներդնել արտադրության մեջ, ուժեղացնել ակադեմիայի և ճյուղային գիտական հիմնարկների համատեղ աշխատանքը կոմպլեքսային գիտական պրոբլեմների լուծման ուղղությամբ:

Ընդհանուր ժողովը միահամուռ հավանություն տվեց ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումներին և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնարկների կոլեկտիվներին կոչ արեց բոլոր ջանքերը գործադրել համագումարի առաջադրած խնդիրների հաջող կատարման համար:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ